

Ֆէրէյդուն՝	Սափրիչ
Հասան՝	Խոհարար
Մահրուբ՝	Խափշիկ ստրուկ, գանձապահի պաշտօնով
Սէեդ՝	Խափշիկ ստրուկ, գանձապահի պաշտօնով

և բացի դրանցից՝ նաև շատ մէյթարներ:

Նախորդ գլխում յիշուած երիտասարդ անհաւատը, որը ուղեկցել էր անգլիական դեսպանին դէպի Պարսկաստան, և որը միայն անջքան էր սովորել մեր լեզուն, որ մեր բոլոր ասածները կարողանում էր սխալ հասկանալ՝ պիտի ուղեկցեր Միրզա Ֆիրուզին, և պիտի նաև թարգմանի դեր կատարէր՝ երբ մենք հասնէինք իր երկրի սահմանը, որովհետև նա հաշուել էր, որ մեր ճանապարհորդութեան միջոցին նա անջքան կարիք կը դգար պարսկերէն սովորելու, որ նախ քան մեր Անգլիա հասնելը, մենք կարող կը լինէինք միմեանց լաւ հասկանալ:

Օժարի մահուան տարեդարձի նախընթաց երեկոյին, դեսպանութեան վրանները արդէն կանգնած էին մէկ փարսախ քաղաքից դուրս, և այդ օրուայ առաւօտեան, երբ ամեն մի բարի շիա բարեպաշտութեամբ անէծքներ էր կուտակում այդ վաղուց մեռած յափշտակողի գլխին՝ ճիշտ ան ըսելին որ աստեղագէտները նշանակել էին՝ Միրզա Ֆիրուզն իր հետևորդներով դուրս ելաւ Թէհրանից, «Դարվազա Ղազվին» կոչուած քաղաքադռնով:

Մեզ հետ դուրս եկան մեր բարեկամները, որոնք անդադար աղօթքներ էին վերառաքում մեր աջողութեան համար: Այդ օրը մենք անցկացրինք յաճախ հաղորդակցութիւն ունենալով քաղաքի հետ, որպէս զի նախ քան մեր վերջնական հրաժեշտը, մեր ճանապարհորդութեան համար հարկաւոր եղած պաշարը, կարասիքը, զէնքերն և այլն լրացնենք:

Ես, ճշմարիտ է, քիչ բարեկամներ ունէի որ տխրէին ինձանից զրկուելու համար: Մինչև ցարդ, ես ոչ մի կապով չէի կապուել Պարսկաստանում, ես ոչ տուն ունէի, ոչ էլ զաւակ, ուստի հեռացայ Թէհրանից միայն մի քանի տխրողներ ունենալով:

Բայց ընկերներիս վերաբերմամբ այդպէս չէր: Դեսպանը միայն մէկ կէն ունէր և մէկ էլ զաւակ, սակայն բացի դրանցից, նա ունէր նաև շատ ստրկուհիներ, որոնք ինչպէս պատմում էին, նրա երջանկութեանը շատ էին նպաստում... Նրա ծառաներից մի քանիսը կէն ու ընտանիք ունէին, և հեշտ է

երևակայել թէ նրանք ինչքան սև ջուր ¹⁾ Թափեցին, երբ նրանց յայտնուեց թէ իրանց սիրելիները գնալու էին Ֆրանկստան—մի երկիր՝ որ պարսիկի մտքում միայն մի երևակայական վայր էր, որտեղի բնակիչներն անփոյթ կերպով անմաքուր գազաններ են ուտում և օրհնեալ Մարգարէին էլ խաբեբայ են անուանում:

Ազատօրէն խօսակցելով ապագայ ընկերներին հետ, ես տեղեկացայ, որ նրանցից շատ քչերն էին միայն Սպահանից դուրս գնացել. որովհետեւ նրանք իրանց հայրենի բլուրներից ու դաշտերից զատ՝ գրեթէ ոչ մի ուրիշ բանի, ոչ մի ուրիշ տեղի մասին գաղափար չունէին:

Այլահը միայն լաւ գիտէ թէ ինչ կախարդական դօրու-թեամբ ինձ աջողուել էր հռչակուել որպէս մէկը՝ որ շատ բան գիտէր Եւրոպայի բնակիչների վերաբերմամբ, և ինձ համար շատ զուարճալի էր ահանջ դնել այն տարօրինակ հարցերին, որ տրւում էին ինձ՝ նրանց մասին:

Մէկը հարցնում էր.

Մենք ինչպէս ենք հասնելու այնտեղ. ստորերկրեայ ճանապարհով՝ թէ ինչպէս:

Մի երկրորդն ասում էր.

—Մենք լսում ենք որ նրանց միակ կերակուրը պիղծ գազանն է, որի ուտելը մեր օրէնքով արգելուած է. մուսուլմանն ինչպէս կարող է ապրել այնտեղ՝ նրանց մէջ:

Մի երրորդն էլ ասում էր.

—Գոնէ մենք գինի կ'ունենանք, որովհետեւ ասում են թէ նրանք ուրիշ բան չեն խմում, և որ նրանց բոլոր ջրերն աղի են:

Նազիրը խոստովանուեց որ իր դիտաւորութիւնն էր մի քանի բեռ բրինձ տանել հետ, քանի որ նա կարծում էր թէ Եւրոպայում բրինձ չէր ճարուիլ. Եւ նա կարծես թէ բաւական շփոթուած, տարակուսած էր, թէ ինչ ձևով կարելի էր տանել բաւական քանակութեամբ Շիրազի անուշ ջուր իր աղայի համար շէրքէթ *) պատրաստելու համար:

Մէյթարները շատ մտահոգ էին իմանալու, թէ արդեօք զարին աճիւմ էր այն երկիրներում, որտեղ իրանք գնում էին և թէ արդեօք այնտեղ առատ քանակութեամբ մանրած յարդ կը ճարձէր ձիերին կերակրելու համար:

Սափրիչը կամենում էր ստուգել, թէ ինչ քանակութեամբ

¹⁾ Պարսիկները արտասուքին, փոխաբերական մտքով՝ «սև ջուր» են ասում:

²⁾ Օշարակ է նշանակում:

Մ. Թ.

Մ. Թ.

օճառ պիտի տանէր հետը, և խոհարարն էլ ցանկանում էր իմանալ թէ՛ արդեօք ֆրանկները մէջ անօթների ու կաթսաների գործածութիւնը սովորական էր թէ ոչ:

Ինչ և է, երբ վերը յիշուած երիտասարդ անհաւատը, որը իր ճանապարհորդութեան համար պարսկական շորեր էր հագել, հասաւ, միացաւ մեզ՝ մենք վերջապէս ճանապարհ ընկանք և մեր ձիերի գլուխները դարձրինք դէպի անհաւատների երկիրը: Ես չպիտի մոռանամ յիշել, որ մեզ պատուելու համար, երիտասարդը թոյլ էր տուել, որ իր մօրուքն աճէր, և այդպիսով մեզ համար լուծուեց այն խնդիրը թէ՛ Վարդօք ֆռանկները կարող են մօրուք ունենալ:

Այն բոլոր ֆրանկները որոնք այցելում էին մեր երկիրը անյալիս կերպարանք ունէին, որ մարդ կարծում էր թէ նրանք պատրաստուած էին մեր հարեմների համար. բայց այժմ որ մենք դրականապէս գիտէինք, որ նրանց երեսի մորթու մէջ մօրուքի սերմ կար՝ զայրացանք, թէ ինչո՞ւ նրանք, մեր աչքում, այդքան քիչ արդարութիւն էին անում թէ իրանց և թէ իրանց երկրին:

Այն օրից՝ երբ ես վերադարձել էի Սպահանից, աշխատել էի ստուգել, թէ ի՞նչ պայման կար իմ և աղայիս (այսուհետև իմ աղան պիտի կոչեմ Միրզա Ֆիրուզին) մէջ: Ինձ գաղտնի կերպով յայտնել էին, որ նա նախանձել էր թէ ինչո՞ւ մեծ վէզերն ինձ էր ընտրել ու նշանակել ընծաների ժողովարարութեան համար: Շատ հաւանականաբար, նա ցանկութիւն էր ունեցել որ իրան յանձնուէր այդ գործը, կամ թէ չէ, յամենայն դէպս, ակնկալել էր որ այդ բանն իր հակողութեանը կը յանձնուէր, և ինքն էլ իր ծառաներից մէկին կ'ուղարկէր կատարելու այդ:

Ինձ յայտնուել էր, որ քանի որ ես մեծ վէզերից էի կախուած՝ դեսպանն ինձ վրայ նայում էր որպէս լրտեսի՝ որ պաշտօն ունէր դիտելու նրա շարժումներն ու գործերը. և քանի որ մեծ վէզերը նրա թշնամին էր, նա ընականաբար կարծում էր, որ ես էլ պիտի իր թշնամին լինէի: Ուստի ինձ խորհուրդ տրուեց խիստ զգոյշ լինել, խոհեմութեան դռները լաւ, լայն բանալ, և անխոհեմութեան անցքերը պինդ փակել:

Որպէսզի կարողանայի նրա կասկածները փարատել, աշխատեցի նրան հաճոյանալ, սիրտը մտնել ու նրան սիրելի դառնալ: Ես արդէն լաւ ուսումնասիրել էի նրա թոյլ կողմերը, և այդ կողմերի վրայ սկսեցի գործել:

Նրա ընաւորութեան մասին իմ ունեցած նախկին փորձառութիւնը սովորեցրել էին ինձ, որ շողոքորթութեամբ՝—չո՛

զորորթութիւն՝ այնքան շօշափելի, որքան թէհրանի կայսերական մզկիթի գմբէթի պղնձապատ երեսը ծածկող ոսկին—այո՛, շողորթորթութեամբ ինձ յաջողուէր (ի հարկէ եթէ ուզէի) միշտ նրա մօրուքը ձեռքումս պահել և նրան պտոյտ գործել տալ ճրկոյթիս շուրջը՝

Հետևաբար, ես սկսեցի ամեն մի պատեհութիւնից օգտուել, ամեն առիթ որոնել ճանապարհին խօսակցելու համար նրա հետ, միշտ մի-երկու քայլ նրանից յետ մնալով սակայն. և երբ որ իջևանում էինք, միշտ շտապում էի նրա առաջ կանգնելու և սկսեցի շատ խոնարհաբար ընթանալ. երբէք չէի համարձակուում նստել մինչև նա չէր հրամայում, և այդպիսով—իմ ծառայութեամբ ինչպէս և իմ կեղծ հպատակութեամբ ու ակնածութեամբ՝ նրան շատ հաճոյացայ։

Նա միշտ յայտնի էր եղել իր չափազանց անխոհեմ լեզուով, և ամեն մարդ գիտէր թէ դրա համար էր, որ մեծ վէզիրը վճռել էր, որպէս պատիժ՝ ուղարկել նրան արևի ճառագայթներինց զուրկ երկրներ իբրև դեսպան, յուսալով որ այդ միջոցով իսպառ կազատուէր նրանից և գուցէ նրա լեզուից։

Մենք դեռ շատ փարսախներ չէինք ճանապարհորդել, երբ նա կարծես թէ յանկարծ արձակուեց իր կապանքներից և բռն շտապաշտովութիւն տուեց իր զգացումներին։ Շրջապատած իր ծառաներով (որոնք թէև տխուր սրտով մտածում էին, թէ իրանք ի՞նչպէս հեռացել էին իրանց տներից, սակայն պատշաճ էին մասնակցելու այն բանին որ անցնում էր նրանց շուրջը) նա ընկաւ հետևեալ մենախօսութեան մէջ։

«Ես արել եմ նրա հօր գերեզմանին այն՝ ինչ որ հարկաւոր էր։ Ես ոչ կը նայեմ նրա կնոջը, ոչ նրա քոյրերին։ Երանի՜ թէ մի պառաւած էջ սիրահարուի նրա մօր վրայ։ Մարգարէի օրհնութեամբ, հարիւրաւոր շներ՝ մէկը միւսի ետևից մի անկիւնաքար ¹⁾ կը շինեն նրա մօրուքից, և կը կանչեն իրանց բոլոր բարեկամներին որ իրանց օրինակին հետևեն։ Այ դու քարասիրտ, անգութ պառաւ, դո՛ւ, որ սիրտդ երբէք չէ հալում, չէ փղձկում։ Ինչալլահ, իսկոյն կթափուին գլխիդ այն բոլոր անէծքները՝ որ դեռ ոչ որ չէ մտածել, և այն բոլոր թշուառութիւնները՝ որ դեռ ոչ ոքի չէ պատահել։»

¹⁾ Դիւաւոր անկիւնաքարը մի մեծ քար է որ դրւում է շինութեան հիմքի տակ ամրացնելու ուղանկիւն կազմող երկու պատերը։ Այս քարերը մի քանի հին շինութիւնների մէջ մօտ 20 ոտք երկայնութիւն և 8 ոտք լայնութիւն ունին։ Այսպէք երևի նշանակում է թէ շները աղբային շինութիւն կը կանգնեն նրա մօրուքի վրայ։

—Հնչի, բացազանչեց նա դառնալով դէպի ինձ, հնչի, երդուեցնում եմ քեզ իմ հոգեով ու քո մահով, քեզ՝ որ լաւ ճանաչում ես աշխարհը և կերելի ես թէ տաճիկների և թէ թիւրքմէնների աղտեղութիւնը, ասան, ի՞նչպէս եղաւ որ դու համաձայնեցիր ուտել մի կծծի պտուաւի աղտեղութիւնն էլ:

Ապա նայելով ուղիղ իր դիմացը, շարունակեց ճանապարհը. խումբը հետևում էր նրան.

—Լաւ, շարունակեց նա, ես այժմ դեսպան եմ, և... և ուր եմ գնում.—գնում եմ ֆրանկների թագաւորի մօտ: Ինչալլան, նրանք էլ, նրանց հայրերի գերեզմաններն էլ յաւիտեան կը պղծուին: Ես ստիպուած եմ թողնել ընտանիքս, երեխաս, հայրենիքս և թափառել դէպի անծանօթ վայրեր, գնալ անձօրուք անհաւատների մէջ, և այդ բոլորն ի՞նչի համար—նրա համար որ, այն պառաւ, վատածնունդ վէզիւրը ցանկանում է մտածել որ շահը վերջերս սկսել է չափից աւելի ուշադրութիւն դարձնել վրաս:

—Բնի, ասացի ես, ինչ որ դուք հաճում էք ասել՝ ճշմարիտ է, և ես որ շահից էլ պակաս եմ, հասկանում եմ ձեր զգացումները, ես տեսնում եմ որ դուք իրաւունք ունիք: Բայց յանուն ձեր զաւակի, Շահի գործը պիտի կատարուի մէկն ու մէկի ձեռքով: Եթէ ձեր ձեռքով չլինի, մի որևէ ուրիշի ձեռքով պիտի լինի. սակայն ձեր մօրուքը սիրէք թոյլ տուէք ինձ հարցնել թէ՛ ձեզանից զատ էլ ով կայ ամբողջ Իրանի երկրում, որ կարողանայ յանձն առնել այդ գործը:

—Ձկայ ուրիշ մէկը, բացազանչեց Մոհամէդ բէկը—արարողապետը Մաշալլան, Պարսկաստանում այժմ ով կայ մեր աղայի նման. ով է նրա նման խելքի ու հանճարի տէր մարդ:

—Բնի, բնի, գոչեցի ես. բացի դրանից՝ ով է նրա պէս կատարեալ, ով է նրա պէս խորաթափանց:

—Դատողութեան և հնարքի տէր մարդ, աւելացրեց արարողապետը:

—Բարի սրտի, բարի ընաւորութեան և բարի բախտի տէր մարդ, ասացի ես:

—Ճշմարիտ է, ճշմարիտ է, ասաց ընկերս, նրա հաւաստաբը չկայ:

Բացի այդ բոլորից, մաշալլան, նայեցէք նրա անձնաւորութեանը, ասացի ես: Մաշալլան, գեղեցիկ երիտասարդ է, մէջքը նեղ, կուրծքը լայն, ինքը լաւ ձիաւոր, մի մարդ՝ որի հետ ոչ ոք չէ կարող մրցել նիզակի գործածութեան մէջ:

Այս խօսքերը լսելով Միրզա ֆերուզը, որ թոյլ էր տուել որ մեր բառերը ազատ մուտ գործէին իր ականջների մէջ,

ասպանդակներով ձիու կողերը խթանելով՝ սլացաւ առաջ, ճանապարհից խոտորեց, մի երկար, թունդ պոռոյտ գործեց և վերադարձաւ դէպի մեզ, ըստ երևոյթին շատ հաճոյացած իր քաջագործութիւնով։ Նա յետոյ իր բազկի ամբողջ ուժով կանգնեցրեց իր ձիուն մի քանի գազ մեղանից հետու։

— Մաշալլան, մաշալլան որոտաց ամբողջ խումբը, տեսնելով նրա քաջագործութիւնը։ Ի պատասխան այդ խրախուսիչ բառերին, դեսպանը մի ջիրիդ (գաւազան) ուղղեց և բացազանչեց։

— Այդ շատ ճշմարիտ է։ Ալլիի մօրուքը վկայ որ ձիավար-թութեան մէջ՝ ոչ ոք չէ կարող մրցել հետս։

Ապա ինձ ձայն տալով ասաց։

— Հնչի, յանուն Ալլահի, եկ մի քիչ խաղ անենք։

Ես իսկոյն ձիս յառաջ քշեցի. և սկսեցի փախչել նրա առջևից ամենաշնորհալի ձևովը որ կարելի էր. նա էլ իսկոյն իմ ետևից քշելով՝ հաճեցաւ իր ջիրիդը նետել գլխիս, որին նա անբան ուժգին հարուած հասցրեց, որ փայտը թռաւ մի քանի քայլ հեռու և նրան ցանկանալու էլ ոչինչ բան չթողեց։

Սա մի նշան էր խմբի մնացած անդամներին համար, որ թողնէին ճանապարհորդական քայլերի լրջութիւնը և սկսէին մի կռուախաղ անել դաշտի վրայ, աղմկելով, գոռալով աքացելով, յետ քշելով, առաջ քշելով, և մի խօսքով, անելով ամենը՝ որ անում են լոկ հաճոյքի համար ձի հեծնողները։

Երբ նրանց աշխոյժի յորդութիւնը դադարեց, և մենք կրկին հաւաքուեցինք ու խումբ կազմեցինք նրա ետևից՝ նա դալան ուղեց։ Ղայլանը մատուցուեց նրան, նա ծխեց ու զըրուցեց մինչև հասանք մեր առաջին կայարանը։

Թէպէտ գլխիս ստացածն հարուածը բաւական նուազեցըրել էր իմ գովասանքների հոսանքը, այնուամենայնիւ ես աշխատեցի ուրախ ու զուարթ ցոյց տալ ինձ, և չնայած որ գըլխիս վէրքը բաւական ցաւ էր պատճառում ինձ, դարձեալ կարողանում էի ծիծաղել աղայիս կատակների վրայ։

Որպէս կատակ նա յաճախ ասում էր։

«Ա՛յ, Հնչի, դու բաղդաւոր ես, որ հարուածը դրանից աւելի ուժգին չէր։ Ալլահը ողորմած է», — խօսքեր՝ որ մեզ շրջապատողների երեսները ծածուկելով ծիծաղեցնում էին նրանց և միևնոյն ժամանակ՝ շատացնում էին այն բաւականութիւնը որ ինքը՝ դեսպանը վայելում էր, երբ մտածում էր իր ճարտարամտութեան վրայ։

Գլ. Է.

Միրզա Ֆիրուզը Էրզրումում գործադրում է իր դեսպանական ոյժն ու իրաւունքը, եւ խրոխտանում է «երեք տոյ ունեցող» փաշայի դէմ՝ առ ոչինչ համարելով նրան։—Նրանք հասնում են Կ. Պոլիս։

Հանգիստ ու կարճ իջևաններով մենք ճանապարհուեցինք Պարսկաստանի միջով, և մի քանի օր էլ մնացինք Թաբրիզում՝ ստանալու մեր մեծահամբաւ արքայորդու հրամանները, նախ քան մեր՝ պարսկական հողից դուրս ելնելը։

Յանձն առնելով այն նամակները, որ նա գրել էր իր հօրեղբոր՝ այսինքն Անգլիայի Թագաւորին, նաև մի քանի ընծաներ՝ մենք ճանապարհուեցինք, անցանք Երևանով, անցանք Աղբի Դաղի ¹⁾ ստորոտով, քնեցինք հայոց մենաստանում և, վերջապէս առանց որևէ դիպուածի անցկացանք Արփաչայի սրնթաց ու վտանգաւոր գետակը։

Անցնելով Հայաստանի սառուցեալ վայրերը, մենք հասանք Ղարս, ուր երկու օր հանգստացանք, և առանց հանդիպելու այն սոսկում պատճառող քիւրդ աւաղակներին, որոնք գտնւում են Սալմանլուի լեռների վրայ, մենք ի վերջոյ հասանք Էրզրում, ուր մնացինք հանգստանալու։

Այստեղ դեսպանը լաւ ընդունելութիւն ստացաւ նահանգապետից—երեք տոյ ունեցող փաշայից, որ իր ձեռքից եկածը չխնայեց մեր կացը հաճելի դարձնելու. բայց պարզ է որ մենք մտել էինք նրա քաղաքը մի շատ անաշոյղ, անբաղդ ժամում, որովհետև, մեր հասնելուց քիչ յետոյ տեղի ունեցաւ մի դէպք, որը խզեց այն բարեկամութեան կապը որ սկզբում հաստատուել էր դեսպանի և փաշայի միջև։

Մեր սուրհանդակ Սադեղը, որ անքան ապականուած, փչացած, անպիտան մարդ էր, վատթարագոյնը իր եղբայրակիցներից, դեռ ևս Էրզրում չհասած՝ արդէն արամադրութիւն էր ցոյց տուել փախչելու. նա աւելի քան մէկ անգամ ցաւ էր յայտնել, որ ինքը թողել, հեռացել էր իր հայրենիքից ու նրա գլուարճութիւններից։

Շատ օրեր չէին անցել մեր հասնելուց, երբ դեսպանին յայտնեցին, թէ Սադեղը չկար, անյայտացել էր, և աւելացրին որ զայլանի ոսկէ գլուխներից մէկը, ինչպէս և մի ձիու վզի ոսկեղլթան պակասում էին։ Իսկոյն խուզարկութիւն սկսուեց։

¹⁾ Աբարատը՝ որ կոչւում է նաև «վայրենի լեռ»։

Փաշայի պաշտօնեաններին, ինչպէս և դեսպանի ծառաներին մի քանիսը ուղարկուեցին որոնելու և բերելու նրան, և երկու օրից փախստականը բերուեց և դատապարտուեց որպէս գող։ Նրա ձեռքերն ու ոտները կապեցին և դեսպանը թիւրք պաշտօնատարներին ներկայութեամբ յայտարարեց որ իր դիտաւորութիւնն էր յանցաւորի ականջները կտրել տալ։

Այս լուրը հասաւ փաշային, որ զգալով որ իրանից դատուրիչ ոչ ոք իրաւունք չունէր այդպիսի մի պատիժ տալ մէկին և որ եթէ ինքը թոյլ տար որ իր քաղաքում այդպիսի զեղծում գործուէր՝ դրանով կը կորցնէր իր նշանակութիւնն ու հեղինակութիւնը՝ ուստի դեսպանին ազդարարելու համար նա հրամայեց իր գլխաւոր չառչին, որը մի պառաւ դաժանադէմ, սպիտակամօրուք թիւրք էր, որ մի շատ քաղաքավարի պատգամ տանի փաշային։

Շրջապատուած իր ծառաներով, դեսպանը դեռ շարունակում էր կատաղի կերպով զայրանալ իր ծառայի չար յանցանքի վրայ, երբ պառաւ չառչը ներս մտաւ։ Նա իր բերանից դուրս էր թափում բառերի հեղեղ, անիծելով այն օրը, երբ ինքը սկսել էր իր ճանապարհորդութիւնը, նաև անիծելով նախ մեծ վէզըին, որ իրան դուրս էր ուղարկել իր երկրից, և յետոյ թիւրքերին, որոնք հարկ եղած յարգանքը չեն ցվցց տալիս Ալիին ու նրանց երկիրը, երբ Օսմանի ահեղ որդին ընդհատեց նրան իր «սէլամն ալէյքում»-ով և պատշաճ յարգանքներով նստաւ ծալապատիկ գորգի ծայրին, ծածկելով ոտքերը իր փէշերով։

Ի՞նչ է պատահել, հարցրեց Միրզա Ֆերուզն իր այցելուից։

— Ո՛չինչ, պատասխանեց չառչը։

— Լսե՛լ էք, թէ մեր սրիկայ հայրենակիցը, է՛ն փէզէվէն-զը... սրիկայ ի՞նչ գարշելի յանցանք է գործել, ասաց դեսպանը։ Ինչալլահ նրա հայրը շուտով կայրուի։ Մենք ամապիսի էշեր չենք որ թողնենք նա մուֆտ (անպատիժ) դուրս պրծնի մեր ձեռքից։ Մինչև ես նրա ականջները պրպանս չդնեմ, ո՛չ մի կաթիլ ջուր չեմ առնիլ բերանս։ Ա՛յդ է իմ վճիռը, լաւ իմացէք և միտքներդ հանգիստ պահէք, ո՛վ էֆէնդի։

— Փաշան՝ իմ տէրը, ասաց թիւրքը, աղօթում է ձեր երջանկութեան համար, և ինձ պատուիրել է ձեզ յայտնել որ, այդպիսի բաներ չեն կարող լինել այստեղ։

— Ի՞նչպիսի բաներ չեն կարող լինել, բացազանչեց դեսպանը շատ մեծ աշխուժով. ի՞նչը չէ կարող լինել։ Ուրեմն ես չալթի կտրեմ նրա ականջները։ Ա՛, ուրեմն դուք շատ

քիչ էք ճանաչում Միրզա Ֆիրուզին, եթէ կարծում էք որ իմ վճռածը չեմ կարող կատարել: Երգւում եմ Մարգարէի սուրբ մօրուքովը, երգւում եմ Շահի աղովը, փաշայի հոգւովը և ձեր մահովը, որ ես շուտով կը կտրեմ նրա ականջները—ականջներն ասացի—հէ, Ալին վկայ որ գլուխն էլ հետը կը կտրեմ, այո՛ կը կտրեմ այնպէս՝ ինչպէս թէ ջուր եմ խմում: Մենք հազուադէպ խինթեր ենք, այո՛, մենք, մենք պարսիկներս. մենք չնչին բաների վրայ կանգ չենք առնում, կատակ չենք վերցընում:

—Բայց, ասաց թիւրքը, որին դեսպանի խօսքերը ամենին էլ չըարժեցին—բայց իմ տէրը ինձ պատուիրել է ձեզ ասել որ, ինքն երեք պոչ ունեցողներից մէկն է, և որ, ուրեմն, էրզրումում իրանից դատ՝ ուրիշ ոչ ոք իրաւունք չունի ականջ կտրելու:

—Երեք պոչ, բացազանչեց Միրզա Ֆիրուզը. երեք պոչ ասացիր: Գիտցիր որ, եթէ փաշան երեք պոչ ունի, ես տասն և հինգն ունիմ. եթէ այդքանը բաւական չլինի՝ հարիւրն ունիմ, և եթէ այդքանն էլ բաւական չէ՝, ասա նրան որ հազար ու մէկ պոչ ունիմ: Գնա, Ալահի սիրոյն համար գնա, և ասա փաշայիդ որ, քանի որ ինքն իր երեք պոչն է հաշուի մէջ բերում, իմ վճիռը պիտի կատարուի, ականջները պիտի անպատճառ կտրուին ու կտրուին:

Յետոյ բարձրաձայն կանչելով իր ֆերաշին և երկու-երեքին իր միւս ծառաներից, նա ամենախիստ ու ամենավճռական տոնով ասաց.

—Գնացէ՛ք սրիկաներ, գնացէ՛ք, վաղէցէ՛ք իսկոյն և այս րոպէիս Սադեղի ականջները բերէ՛ք ինձ: Ես նրան երեք պոչանի մարդ կը դարձնեմ. եթէ նա յիսուն ականջ էլ ունենայ՝ բոլորն էլ պիտի կտրեմ:

Եւ դառնալով չաուշին, որ արդէն կանգնել և պատրաստւում էր հեռանալու, ասաց.

—Ստուերդ երբէք չպակասի: Ալահը պաշտպանի քեզ. աղօթքներս ընդունել տուր փաշային, և կրկին ասա նրան որ, եթէ ինքն երեք պոչ ունի, ես, Մարգարէի օրհնութեամբը հինգըն ունիմ:

Թիւրքը իր կոկորդի տակից բացազանչելով «լա իլա իլա Ալլահ», դանդաղ քայլերով հեռացաւ, և դեռ շատ քայլեր չէր առել, երբ նա հանդիպեց պարսիկներին, որոնք մի տապակի խոփի մէջ դրած բերում էին իրանց հայրենակցի ականջները, կամ ականջների պէս բաներ, և որոնք չլղացան հը-

պարտութեամբ ցոյց տալ դրանց մաղասոտ, պաղարին Օսմանցուն:

Դեսպանի այս վարմունքի վրայ փաշան սաստիկ կատաղելով, այնքան անախորժ դարձրեց մեր կացը իր քաղաքում, որ մենք այլ ևս չկամեցանք աւելի երկար մնալ այնտեղ: Ուստի շուտով հեռացանք, թողնելով ականջները կտրուած Սատեղին՝ որ վեռադառնար Պարսկաստան ամենալաւ ձևովը, որ կարող էր:

Ինչ և է, քիչ ժամանակից յետոյ իմացուեց, որ նա հեռացել էր ողջ առողջ, իր ականջները գլխին կապած: Բանից դուրս եկաւ որ, տապակի խուփի վրայ մատուցուած մսի կտորները՝ միայն մի փոքրիկ այծի մսի կտորներն էին եղել: Կամ այն է, որ այդ ծառաներն իմացել էին որ իրանց աղան անգութ բնաւորութիւն չունէր, կամ թէ չէ՝ իրանք յանցաւորի անձնական բարեկամները լինելով՝ խնայել էին նրան: Վերջապէս այսպէս թէ այնպէս, Սադեղը լաւ էր դուրս պրծել իր աւազակութեան համար հրամայուած պատժի տակից:

Կտրելով Թիւրքիայի երկար և տաղտկալի ճանապարհը, և վէճեր ունենալով ամեն մի փոստային կայարանում, նաև շատացնելով Օմարի հետևողների դէմ մեր ունեցած ատելութեան պաշարը՝ մենք, ի վերջոյ, հեռուից տեսանք խունխորի¹⁾ լայնատարած ու փառաւոր մայրաքաղաքի գմբէթներն ու մինարէթները:

Դեսպանը պատշաճ մեծարանքներով ընդունուեց Թիւրք իշխանաւորներից, և մի ընդարձակ տուն ևս Սկիւտարում²⁾ յատկացրուեց նրան և խմբին: Նշանակուեց նաև մի մէհմանդար, որի պարտականութիւնն էր հաւաքել և բաժանել օրեկան պարէնը որ կայսրութեան մէջ հաստատուած սովորութեան համեմատ՝ շնորհուել էր դեսպանի և իր հետևողների վայելման համար:

Մեզ ուղեկից երիտասարդ անհաւատը որ այժմ կարողանում էր բաւական լաւ խօսել մեր լեզուն, թողեց մեզ և իջաւ իր ազգակիցների մօտ, և քիչ յետոյ էլ մեզանից առաջ ճանապարհուեց դէպի մի քաղաք՝ որ կոչոււմ էր Գեամուր Իզմիր՝ (անհաւատ Զմիրուխա) մի նաւ նախապատրաստելու մեզ Անգլիա տանելու համար:

1) Թիւրքաց Սուլթանը Պարսկաստանում խունխոր (արին խմող) է կոչուում:

2) Կ. Պոլսի արուարձաններից մէկը, Վոսիորի Ասիական ափում:
Ծ. Բ.

Իր ժամանումից քիչ յետոյ, Միրզա Ֆիրուզն այցելեց շէնք վէզրին, նաեւ թիւրք պաշտօնականատարներէից շատերին այլորդաբար, որոնցից մեծ մասը շատ հաւանեցին նրան և, ինչպէս երևաց, շատ էլ զուարճացան նրա զրոյցներէից։

Սակայն, որչափ էլ որ այս հանգամանքը հաճոյք էր պատճառում դեսպանին, այնուամենայնիւ նա երբէք չէր կարողանում իր սրտից հանել այն ընդածին ատելութիւնը որ նա ունէր դէպի թիւրքերը, և միշտ, երբ առիթ էր ներկայանում նա վայելուչ խօսքերով արտայայտում էր այդ ատելութիւնը։

Մի օր, մի առանձին տեսակցութեան միջոցին մեծ վէզրի տանը, որտեղ ինձ էլ թոյլ էր տրուել ներկայ լինել, այդ վէզրիը որ յայտնի էր որպէս մի մաքուր և մոլեռանդ մուսուլման, խօսելով ընդհանրապէս ֆրանկների ոյժի, հաստատութիւնների, ինչպէս և այն յամառութեան մասին, որով նրանք պիտի փարած են իրանց կրօնին ու հաւատին՝ ասաց դեսպանին,

—Ա՛, բարեկամ, աշխարհս երբ պիտի մաքրուի այս ամենաանիծեալ անհաւատների ցեղից. ի՞նչ պիտի անել։

—Ես կասեմ թէ ի՞նչ պիտի անել, պատասխանեց Միրզա Ֆիրուզը. Ալլահը պիտի անի այդ, որովհետեւ, խօսքը մեր մէջ, ես չեմ կարծում որ դուք երբեկեց կարող լինէք։

Մի ուրիշ դէպքում էլ, մի մուֆտու ¹⁾ այցելելիս, երբ վերջինս՝ օրէնքի այդ մեծ պետը՝ բաւական ցաւ յայտնում էր չար ճակատագրի օրէնքի վրայ որ նրան հեռացրել էր իր ճշմարիտ հաւատի երկրից, բնակեցնելով անհաւատների երկրներում՝ ասաց.

—Մեծ կը լինի ապականութեան այն կոյտը որ կը ծանրանայ ձեր վրայ նախ քան ձեր վերադարձը։ Դուք ի՞նչպէս կը կարողանաք ձեզ մաքրել դրանից։

—Ինչպիսի պատասխանեց դեսպանը, ինչպիսի ես ինձ կը մաքրեմ դրանից՝ նրանով որ, վերադառնալիս՝ չեմ անցնիլ Ստամբուլի վրայով։

Մի անգամ Միրզա Ֆիրուզը հրաւիրուած էր ազատ ապրողների մի խմբի մէջ, ուր գինի էին խմում, երգում ու նուագում։ Երգից ու երաժշտութիւնից առաջացաւ մի վիճաբանութիւն թրքական և պարսկական երաժշտութեան արժանիքի մասին։ Մի երիտասարդ էֆէնդի որ ինքն իրան շատ սրախօս մարդ էր համարում, բաւական բարձր, մեզ լսելի ձայնով՝ ասաց.

¹⁾ Մուֆտի արեւելեան բառ է և նշանակում է դատաւոր. Մ. Ք.

—Պարսիկները հրգը այսպէս է ազդում լսողի վրայ. երբ մի պարսիկ երգում է, միշտ սպասում ենք որ անձրև պիտի գայ:

—Եւ մենք Պարսկաստանում միշտ նշմարել ենք, ասաց Միրզա Ֆիրուզը, որ երբ մի թիւրք երգում է, բոլոր էշերն սկսում են զուլ, որպէս պատասխան:

Գլ. Ը.

Մ'ըզիս Ֆիրուզը ընդունում է մ'ի չէրք'զուհի որպէս նուէր:—Զէրք'զուհու գիրութեան սլաոմութեան նկարադրութիւնը:

Մի բանի օր մեր մեկնելուց առաջ, դեսպանն ընծաներ ուղարկեց թիւրք նշանաւոր պաշտօնակատարներին, որոնցից փոխարինարար ստացաւ և՛ ինքը. նա մեծ մտերմութիւն էր հաստատել պետական քարտուղարներից մէկի հետ—մի ուրախ, զուարթ մարդ՝ որը նուիրուած էր զուարճութիւնների, և յատկապէս շատ սիրում էր պարսկական բանաստեղծութիւնն ու գրականութիւնը: Սրան՝ նա ընծայեց իր սիրական ձին, որ ինքն հեծնում էր, նաև մի օրինակ գեղեցիկ Հաֆէզ ¹⁾. և որովհետև նա մեծ անձկութիւն ունէր որ իր ընծաները լաւ ընդունելութիւն գտնէին, նա խնդրեց ինձանից որ ես անձամբ մատուցանէի նրանց պատշաճ մեծարանքներով հանդերձ:

Շարակ էֆէնդին—այդ էր նրա անունը,—յայտնեց որ իր բարեկամի ուշադրութեան այդ նշանը շատ հաճոյք էր պատճառել իրան, և միևնոյն ժամանակ իմ խորհուրդն հարցրեց. գտնել մի բանի որ իմ կարծիքով շատ հաճոյք կը պատճառէր դեսպանին: Նա գիտէր որ շալեղէն շատ ունէր վերջինս, գիտէր նաև որ մուշտակն էլ հասարակ բան էր Պարսկաստանում: Կտորներ (ճոթ, մահուդ կայն) ու ճամկաւոր տիպակն էլ չարժէր տալ, որովհետև գիտէր որ մեր երկրում աւելի գեղեցիկ տեսակներն էին պատրաստուած քան թիւրքիայում: Անգլիական ապրանք էլ չէր ուզում տալ, քանի որ մենք արդէն գընում էինք այնտեղ՝ որտեղ դրանք արտահանուած էին: Սաթա-գլուխ չիբուխներ էլ հօ պարսիկները սովորութիւն չունէին գործածելու. մենք ոչ գնահատում էինք նրանց ձիերի վերաբերեալ իրերը, ոչ էլ նրանց կարպետները:

Ուրեմն ի՞նչ տար, ի՞նչ անէր:

¹⁾ Պարսկական ամենաարժանայարգ բանաստեղծ:

ի վերջոյ մի միտք ծագեց նրա գլխում և նա բացադան-
չեց:

— Իմացայ, իմացայ: Դեռ պանը, ես ճանաչում եմ նրան,
իդական սեռի գեղեցկութեան վրայ հիացող մարդ է: Նա չպի-
տի գնայ անհաւատներէ մէջ իր մօրուքը նրանց ձեռքը դնելու:
Ես նրան պիտի ընծայեմ իմ նոր չէրքէզուհուն, որը գեղեցիկ
է որպէս լուսինը և որը հազիւ մէկ ժամ է ինչ դաւանել է
ճշմարիտ հաւատը: Ես երեկ գնեցի նրան նաւումը, աւազա-
կապետ Ղէրոսի Օղլուից, որն ինձ հաւատացրել է որ նա չէր-
քէզ արիւնից է և իշխանուհի է: սակայն ես կարծում եմ որ
այդ քաֆէրը սուտ է ասում:

Յետոյ նա իր խօսքը մասնաւորապէս ինձ ուղղելով ասաց.

— Արդեօք համարձակուե՞մ այդ չէրքէզուհուն ուղարկել
ձեր աղայի համար:

Ես պատասխանեցի նրան թէ բոլորովին անձանօթ էի
նրա ճաշակներին, բայց թէ ես շուտով իրան կը յայտնէի դես-
պանի ցանկութեան մասին այդ բանի վերաբերմամբ, հաստատ
գիտեանալով, որ եթէ նա հնարաւորութիւն ունենար չէրքէզու-
հուն էլ աւելացնել իր խմբի վրայ՝ նա կ'ընդունէր առանց վա-
րանման:

Ուստի ես վերադարձայ Միրզա Ֆիրուզի մօտ, որ ըսկըզ-
բում մեծ յափշտակութեամբ ընդունեց էֆէնդու առաջարկած
ընծան, յետոյ մի քիչ երկիւղ յայտնեց և վերջն անբաղաճաւա-
րի չլինելու համար՝ ինձ ասաց որ նրան յայտնեմ, թէ դա ա-
մենալաւ ընծան էր, որ մտածուել էր, բանի որ ոչ մի ուրիշ
բան չէր կարող աւելի հաճոյք պատահաւել իրան այնքան, որ-
քան այդ չէրքէզուհին:

Մութը կոխելու ժամանակ՝ չէրքէզուհին հասաւ, գլխից
մինչև ոտները լաւ ծածկուած, նստած մի ձիու վրայ: Նրան
առաջնորդում էր էֆէնդու սեւը ¹⁾, որը մի լաւ դրամական
պարգև ստացաւ իր կրած նեղութեան համար:

Նա իսկոյն առաջնորդուեց դէպի դեսպանի տունը, ուր,
վերջինս արդէն մի յարմար սենեակ էր պատրաստել տուել
նրան ընդունելու համար, և երբ նա գնաց այցելելու նրան՝
մենք հաւաքուեցինք և սկսեցինք ազատօրէն խօսել և վիճել
այդ ընծայի հաւանական հետեանքների մասին:

— Նա մի լաւ բաժին կը ստանայ իր կնոջ մաշիկից ²⁾,

1) Պափշիկ ստրուկ:

Մ. Թ.

2) Գարսկաստանում՝ մաշիկը մի լաւ գործիք է մէկի վրայ յարձակ-
ուելու համար: Պանուշն իր ստրկուհուն ձեռնում է իր մաշիկով, կէնը՝ իր

ասաց Իսմայիլ բէգը—նազիրը, եթէ նա մի անգամ նրա ձեռքը ընկնի և իմանայ թէ իր ամուսինն ինչ է արել:

—Ա՛, ասաց Թաղին—Ֆէրաշը, որը կարծես թէ շատ բան գիտէր Միրզա Ֆիրուզի ընտանեկան ներքին հանգամանքներից. խանումը հօ այժմ շատ հեռու է, և մինչև այդ ժամանակը գայ՝ աշխարհս արդէն շրջուած կը լինի:

—Եթէ նա վրացուհի լինէր, նկատեց Սէիդը, ինչն էլ ֆեսս չէր լինի, որովհետև վրացիք հյուս, դիւրանասաց մարդիկ են. բայց չէրքէզ լինելը... Իմհ... Ժամանակ է որ մենք յոյսներս Ալլահի վրայ դնենք... Նրանք վատ ցեղ են:

—Վրացի կամ չէրքէզ, լէզի կամ աւշա, ասաց արարողապետը, դրանք բոլորն էլ միասին սատանի զաւակներ են: Ես յոյս ունիմ որ այս օտարուհու մեր մէջ գալը մեր դիւսին մոխիր չի թափիլ օտար հողում:

Ես ձեզ մի բան ասեմ, նկատեցի ես, ինչ էլ որ մենք այդ խնդրի մասին խօսում ենք՝ լաւ է, ֆեսս չունի, միայն թէ յիշենք որ նա դեսպանի սեփականութիւնն է և թէպէտ նա միայն մէկ կին է այսքան տղամարդկանց մէջ, այնուամենայնիւ չմոռանանք որ նա միմիայն մեր տիրոջն է:

—Բա՛ւի, բա՛ւի, բացադանչեցին բոլորը. մենք միւս շներն ենք որ ուրիշ կերպ մտածենք:

Վերջապէս հետեւեալ առաւօտը դեսպանն իր յօժար կամքով ինձ պատմեց իր ստրկուհու պատմութիւնը որ ինքը լսել էր հէնց նրա բերանից:

Համառօտիւ այս էր: Նա մի չէրքէզ պետի աղջիկ էր, որը ապրում էր Սև Մովի ամին մօտ և որն այնքան անօրէն, ապականուած մարդ էր, որ նոյնիսկ իր հայրենակիցները նրան շէյթանբազէ ¹⁾ էին անուանում: Նրա վայրագութիւնն ու արքշուութիւնը քիչ նշանակութիւն կ'ունենային, եթէ յանկարծական կրքի հետեանքն չլինէին. բայց սաստիկ տրուած էր խաղամուլութեան, որին նա զոհեց ամեն ուրիշ զգացում և այդ նրան առաջնորդեց անյուր ոճիր գործելու:

Նրա այդ վարմունքների մէկին զոհ է գնում իր աղջիկը: Նա մի հարեան պետի հետ խաղալիս՝ իր խաղամուլութիւնն արն ծայրայեղութեանն է հասցնում, որ բոլորովին տնաքանդ է լինում և վճռում է մի վերջին յուսահատական ճիգ էլ գործել իր կորուստները յետ ստանալու համար: Նա որոշում է իր ամ-

ամուսնուն, և երբ մի ծառայ անզգամութիւն է անում, նա իր բերանի վըրայ հարուածներ է ստանում իր կօշիկի կրունկով:

²⁾ Ստանի զաւակ:

բողջ ընտանիքը ծախել, որպէս գերիներ այն թիւը վաճառականներին՝ որոնք պարապում էին գերու առևտրով: Նա, հետեապէս, մի պայման է կապում այդ վաճառականներից ամենայանդուգնի հետ. համաձայնութիւն է կայացնում որ մի որոշ օր, նա որոշ թուով գերիներ տայ արու և էգ—որոնք պիտի փոխադրուին մի նաւ, որ այդ բանի համար պիտի սպասի ծովափից հեռու:

Երբ նրան լուր է տրուում թէ նաւը հասել է, նա իր ընտանիքին ու ազգականներին մի խնճոյք տալու պատրուակով հաւաքում է նրանց իր յարկի տակ և հրաւիրում մասնակցել իրան՝ դատարկելու մի քանի տիկ գինի, որ նա նախապէս պատրաստած է լինում: Երբ նա տեսնում է որ տղամարդիկը բաւական հարբել են և կարող են իր նպատակին ծառայել, մի նշան է տալիս և իր տունն անմիջապէս շրջապատում է մի զօրախումբ զինուած թիւրքերով (գերեվաճառականական նաւի խումբը) որոնք իսկոյն գերում են բոլորին, հարբածներին շների պէս քաշ տալով, իսկ կանանց՝ բռնի յառաջ քշելով:

Բացի իր աղջկանից՝ խաղաժողը ծախում է նաև իր կնոջը, իր կնոջ երկու եղբայրներին, իր մէկ եղբօրը, իր հօրն ու մօրը, երկու սպասուհիներին, երկու հօրաքոյրներին ու մի հօրեղբօրը, և որպէս զի կարողանայ դիւժինը լրացնել, նա յարձակւում է մի քահանայի վրայ, որ այդ ժամանակ հանդարտ գնալիս է եղել ձիով, և նրան էլ աւելացնում է խմբի վրայ:

Հէնց որ վաճառուած գերիները տարւում են նաւը, նաւն իսկոյն ճանապարհւում է և մի քանի օրից յետոյ հասնում է Կ. Պոլիս, ուր պետական քարտուղարը գնում է չէքքեզուհուն:

Դեսպանն ասաց որ նրա չէքքեզական անունը Մարիամ էր, բայց իր դիտաւորութիւնն էր նրան Դէլֆարիբ անուանել, որովհետև նա այնքան հրապուրիչ էր: Նա նկարագրեց նրան, որպէս կարճահասակ, բայց կլոր ու սեխաձև անձն, որ ունէր զարմանալի մեծութեամբ հրացայտ աչքեր և մի կանաչ երես, մինչև անգամ այնքան կանաչ՝ ¹⁾ ինչքան Իրանի ամենանշանաւոր գեղեցկուհիների երեսները:

Նա շատ հրճւում էր իր ստացած ընծայով և յայտնեց իր դիտաւորութիւնը՝ կրթել տալու նրան՝ այն բոլոր արուեստների և կատարելութիւնների մէջ, որ եւրոպացիները ընդունակ են սովորեցնելու: Նա պէտք է լաւ վարպետանար ասեղնագոր-

¹⁾ Մարգը կամ կանաչ մի բառ է, որ Պարսկաստանում գործ է ածւում թուխ բառի նշանակութեամբ:

ծուլեան, կարի, գուլպայագործութեան և մազերը գանգրացնելու արհեստներէ մէջ:

Նա պիտի սովորէր երգել, պարել և նուազել երաժշտական գործիքներէ վրայ. մի խօսքով՝ դեսպանը ցանկանում էր նրան մի այնպիսի կատարելագործութեամբ ստրկունի դարձնել, որ, եթէ երբ և իցէ հարկ լինէր որ ինքը Շահին մի ընծայ տար, որպէս հաշտութեան միջոց՝ նրան պատրաստ ունենար խաղաղութիւնը վերականգնելու համար:

Առ այժմ նա նկարագրում էր նրան որպէս բոլորովին ազէտ անձն, որը ոչինչ չգիտէր իր կրօնի մասին, ո՛չ կարդալ գիտէր, ո՛չ գրել, և նրա ամբողջ բարոյականութիւնը կարծես թէ նրանում էր՝ որ վրէժխնդիր լինէր որ և է մի ընտանեկան վէճի համար, և հիւրասիրութիւն ցոյց տար օտարականին:

Նա կատարելապէս յարմար էր օրհնեալ Մարգարէի հետեւողներից մէկը դառնալու, և առանց մի բոպէ վարանելու, նա արտասանեց ճշմարիտ հաւատի դաւանանքը:

— Թէ նա ինչ ընաւորութիւն ունի, ասաց դեսպանը, Ալլահը միայն գիտէ. այդ բոլորովին կախումն ունի իմ բարի կամ չար բախտից և մոլորակների այն դրութիւնից որ ունէին նրա՝ իմ տունը մտնելու ժամանակ:

Գլ. Թ.

Դեսպանութիւնը մնկնում է Պոլսից, հասնում է Զմիւռնիա եւ մոնում է մի անգլիական նաւ: Նկարագրում է Թէ նրանք ինչպիսի ընդունելութիւն են դոնում նաւում:

Դեսպանը Գեաւուր Իզմիրից ¹⁾ լուր ստանալով որ մի նաւ պատրաստ սպասում էր իրան և իր խմբին Լոնդոն տանելու համար, մենք շարունակեցինք մեր ճանապարհորդութիւնը նոյն կերպով, ինչպէս եկել էինք Պարսկաստանից, միայն այն տարբերութեամբ, որ Դէլֆարիբը (չէրքեզունհին) որ այժմ դբուած էր երկու սեւերի՝ այսինքն Մահբուբի և Սէնդի խնամատարութեան ներքոյ՝ հեծել էր մի ջորի և գլխից մինչև ոտները լաւ ծածկուել էր:

Անցնելով Բրուսա և Մանիսա մեծ քաղաքներից և մի երկրից, որ արտադրում է ամեն բան որ կարող է նպաստել

¹⁾ Թիւրքերը Զմիւռնային Գեաւուր Իզմիր են կոչում նրա համար որ այնտեղ շատ եւրոպացիներ են ընաւելում:

մարդուս երջանկութեանն ու բարեկեցութեանը՝ մենք վերջապէս հասանք այն քաղաքը, ուր պիտի գնայինք: Դա ընկած է մի գեղեցիկ խորշի վրայ և կոչոււմ է «անհաւատ», նրա համար որ, իր մէջ տեղ է տուել բազմաթիւ եւրոպացի վաճառականներին—շատերը յոյն, շատերն էլ հայեր, որոնք ազատ կերպով գինի են խմում, և որոնց նման խողերին թոյլ է տրուում շրջել փողոցներում:

Այս քաղաքը մտնելով, մենք փշեցինք մեր ուսերի վրայ՝ մեզանից հետո պահելու նրա բնակիչների անմաքրութիւնը, և յետոյ իջանք մի տան մէջ, որ թիւրք կառավարութեան կողմից պատուիրուել էր նախապատրաստել ղեսպանի համար:

Մէկ փարսախ քաղաքին մնացած՝ մեզ դիմաւորեց երիտասարդ անգլիացին, որը՝ որպէս մէհմանդար՝ Պոլսից մեզանից առաջ էր ընկել կարգադրութիւնների անելու համար: Նա յայտնեց ղեսպանին որ երկու նաւ արդէն պատրաստուած էր մեզի համար, մէկը՝ ինչպէս ինքն ասաց, մի մեծ նաւ էր որ պատկանում էր իր Շահին, և որը նշանակուած էր ղեսպանի և իր հետևորդների համար, իսկ միւսը վարձուած էր մի վաճառականից մեր ձիերը տանելու համար: Նա հաւաստիացրեց մեզ որ արդէն ամեն բան պատրաստ էր մեզ համար, և որ՝ մեզ հարկաւոր եղած պաշարը արդէն նաւի մէջ էր—ոչխարներ՝ քաբարի ¹⁾ համար, այծեր՝ կաթի համար, հաւեր, սագեր, բազեր, հնդկահաւեր և առատ ջուր:

Մնում էր միայն մէկ բան որ նա ցանկանում էր իմանալ, այն է թէ՛ արդեօք ղեսպանը կը սիրէր քնել այնպիսի մի անկողնում որը, ըստ իր նկարագրութեան, այնպէս էր պատրաստուած որ ճօճուէր յետ ու առաջ՝ թէ այնպիսի անկողնում որ անշարժ էր մնում:

Քանի որ մենք բոլորովին անծանօթ էինք նաւի և ծովային կեանքի հանգամանքներին, մենք շատ շփոթուեցինք նրա այդ հարցի վրայ: Նախ և առաջ, մենք զարմացանք երբ մէհմանդարն ասաց որ նաւում մեզ համար պատրաստուած էին այդքան կենդանիներ, որովհետեւ «միթէ նաւը մի հաւաքակ է» մտածեցինք մենք. երկրորդ մեզ համար բոլորովին անհասկանալի էր այն հարցը, թէ արդեօք մէկը ցանկանում է հանգիստ, հանդարտ պառկել, թէ՛ յետ ու առաջ ճօճուել: Ուստի ղեսպանը խոհեմութեամբ թողեց որ այդ խնդիրը դեռ մնար, մինչև որ կարողանայինք աւելի լաւ դատել մեզ համար:

Այս և զանազան այլ հանգամանքներ վիճաբանութեան

¹⁾ Խորովածի

մեծ նիւթ մատակարարեցին մեզ ու սաստկացրին մեր անհամբերութիւնը տեսնելու ֆռանկներէ նաւը և այն բոլոր զարմանալի բաները, որ մենք նախապէս զգում էինք որ նրա մէջ պիտի տեսնէինք:

Մէհմանդարը գիտակից չէր այն հանգամանքին՝ թէ մեր խմբին վրայ աւելացել էր մի չէրքէզուհի, և որովհետեւ նա ծանօթ էր մեր սովորութիւններին և գիտէր որ կինը պիտի առանձնանայ, ազատ մնալու մարդկանց նայուածքից, ուստի նա շտապով դնաց նաւը հարկաւոր կարգադրութիւնը անելու, և մեզ թողեց պատրաստելու մեր իրերը իսկոյն մեկնելու համար:

Շատ մտահոգ էր դեսպանը որ չհեռանար ամից և ոտք չդնէր նաւի տախտակամածի վրայ, մինչև որ բարեյաջող ժամ լինէր, և այդ մասին նա խորհուրդ հարցրեց իր արարողապետից—Մոհամէդ բէգից՝ որը բաւական ծանօթութիւն ունէր աստեղագիտութիւնից, որովհետեւ նա այդ ճիւղն ուսումնասիրել էր Սպահանի հռչակաւոր Միրզա Քաղէմի մօտ:

Նրա ասելով՝ դեռ մինչև մէկ շաբաթ մոլորակներէ բարեյաջող հանդիպաւորութիւն չէր լինելու, ուստի մենք մտքներս դրինք դեռ սպասել և մեր ժամանակն անցկացնել հանգիստ կերպով ծխելով համբրութեան զայլանը. բայց մեր Զմիւռնիա համեմուտ միւս առաւօտը, (զրա նախընթաց օրը մեր բեռներն արդէն փոխադրել էին նաւը) մէհմանդարը նաւապետի ընկերակցութեամբ եկաւ յայտարարելու մեզ, թէ ամէն բան պատրաստ էր, որ քամին աջողակ էր և, որ մենք նաւ պիտի նըստենք:

Այս յայտարարութիւնը չյարմարուեց դեսպանի արած հաշուին, և նա դրականապէս ասաց որ ինքն իր տեղիցը չպիտի շարժուէր: Մի բարեյաջող բողբոջ կարիքը չպիտի արհամարհուէր ասաց նա, և ով ինչ ուզում էր՝ կարող էր մտածել, բայց ինքն իր կողմից այնքան գնահատում էր իր կեանքն ու մօրուքը՝ որ չէր կամենալ սկսել այդպիսի մի վտանգաւոր գործ, այսինքն նստել մի նաւ, որի հրամանատարները անհաւատներ էին և գնալ անհաւատների երկրները առանց իր սեփական աստեղագէտի համաձայնութիւնն ստանալու:

Դեսպանի այս որոշումը՝ աւելի զօրեղացրեց Մոհմէդ բէգը, որը, վստահ իր գիտութեան վրայ և յամառ՝ երկնից հետ իր ունեցած ծանօթութեան կամ հաղորդակցութեան մէջ՝ ասաց յայտնապէս, որ կատարեալ խնթութիւն կը լինէր նաւ նստել մի անհաւատի հրաւիրելով, որ տեսնելով որ քամին աջողակ է՝ բաւական էր համարում և մտածում էր որ էլ ուրիշ բան հար-

կաւոր չէր մի աջող ծովային ճանապարհորդութիւն կատարելու համար: Նրանք երկուսն էլ, որոշեցին որ ինչ էլ որ լինէր՝ իրանց տեղերից չպիտի շարժուէին:

Մէհմանդարն ու նաւապետն ասացին թէ ամենայաջող բողոքն հէնց այն ժամանակն էր որ քամին աջող էր, սակայն իղձը: Նրանք աշխատեցին համոզել, որ եթէ այդ աջող, պատեն ժամանակն իրանց ձեռքից տային, այն ժամանակ շարաթներ կ'անցնէր ու իրանք չէին կարողանալ նաւել. սակայն ապարդիւն անցան նրանց համոզեցուցիչ խօսքերը, և նրանք պատրաստուում էին հեռանալ՝ երբ դեսպանն երկու անգամ փրճւնդտաց, որ ամենալաւ բարեմաղթութեան նշան էր:

Բոլորը շնորհաւորեցին նրան, և նա ասաց.

— Սա բարի նշան է. եթէ միայն աստղերը հիմա հաշտ ու աջողակ լինին՝ սա շատ պատուական բողոք է մեկնելու:

Այդ իսկ բողոքին, Մոհամէդ բէգն էլ փոքրագոյն երկու անգամ: Մենք բոլորս էլ յափշտակուեցինք: «Փառք Ալլահին և զոհութիւն նրա Մարգարէին» բառերը թռան ամենքի շրթունքներից և ոչ մի անհամաձայնութեան ձայն չլսուեց: Բարեգուշակ նշանն այնքան հաստատ էր, որ տեղիք չէր տալիս աւելորդ առարկութեան, ուստի դեսպանը յայտնեց որ ինքը պատրաստ է մեկնելու:

• Մենք յետոյ, առանց յապաղելու, տան դրան սեմից դուրս գալիս մեր աջ ոտները առաջ դնելով՝ խմբով գնացինք ծովափը, ուր մի քանի նաւակներ պատրաստ էին մեզ նաւ փոխադրելու համար: Այստեղ, ֆրանկները բաւական մարդավարութիւն ցոյց տուին: Դեսպանին ու ինձ, և նրա ստրուկներից մէկին որ կրում էր նրա կօշիկները՝ մտցրին ամենամեծ նաւակի մէջ, որտեղ մտան և՛ մէհմանդարն ու նաւապետը. իսկ մի ուրիշ նաւակում էլ նստան մեր խմբի միւս անդամները չէրքէզուհու հետ միասին: Ախուապետին ու նրա ստորադասներին էլ մտցրին այն նաւը՝ որտեղ տեղաւորել էին մեր ձիերին:

Մենք մի մէյդան էլ ունէինք մինչև մեծ նաւը հասնէինք, երբ մի սուլիչի ձայնի վրայ՝ դուրս թռան տախտակամածի վրայ՝ լարախաղացների պէս հարիւրաւոր մարդիկ, որոնք մեզ շատ զարմացրին, որովհետև մենք գիտէինք որ մեծահամբաւ շիրազեցի Խիզ Ալիից զատ՝ որն ամբողջ Ասիայում անզուգական էր այն քաջագործութիւններով որ նա կատարում էր լարերի վրայ խաղալիս, ուրիշ ոչ ոք չէր կարող անել այն՝ ինչ որ սրանք էին անում:

Այդ մարդիկը, ինչպէս մենք տեսնում էինք, շարքերով հաւասարակշռութիւն էին պահում այնպիսի լարերի վրայ որ

հազիւ թէ տեսանելի էին, և աստիճանաբար բարձրանում ու բարձրանում էին մինչև նրանցից մէկը կանգնեց կայմի իսկ ծայրին—մէկը՝ որ մեր կարծիքով կամ ջին կամ դև պիտի լինէր, որովհետեւ, ստուգիւ, ոչ մի մահկանացու չէր կարող այդպիսի քաջագործութիւն անել:

Մենք հազիւ թէ բարձրացել էինք նաւի տախտակամածի վրայ՝ (օրհնեալ Ալին միայն գիտէ թէ մեզ ի՞նչ ձեռով բարձրացրին այդտեղ) երբ անմիջապէս այնքան թնդանօթներ կրակեցին, որ մենք ապշեցինք, մեր թոքերը ջուր կտրեցին և ուղեղներս չորացան:

—Յանուն Ալլահի, գոչեց Միրզա Ֆիրուզը, այս ի՞նչ է նշանակում, արդեօք այստեղ դժգոհքն է թէ՞ երկինքը, ի՞նչ խաբար է:

Մինչ նա զարմացմամբ արտասանում էր այս խօսքերը, նաւապետը նրա առջև կանգնած՝ խոր գլուխ էր տալիս և կարծես թէ նրա հիացումն էր պահանջում:

Եւ միայն թնդանօթաձողութիւնը դադարելուց և մեր ականջները նրանց տուած հարուածներից հանգստանալուց յետոյ էր որ մէհմանդարը մեզ մօտ եկաւ և ասաց թէ՝ այդ ցոյցըն եղել էր ի պատիւ նորին գերազանցութեան, աւելացնելով, որ Անգլիայում՝ դա նշանաւոր անձնաւորութիւններին հիւրասիրելու ընդունուած ձևն էր:

—Ձեր ստուերն երբէք չպակասի, ասաց դեսպանը. ինձ շատ զգալի է այդ պատիւը, (միևնոյն ժամանակ իր մատներն ականջների մէջ խոթելով) և ես հաւաստիացնում եմ ձեզ, որ այս պատուոյ նշանը մշտապէս տպաւորութիւն կը թողնի վերաս: Բայց ի՞նչ օգուտ, ինչի՞ համար այդքան թնդանօթաձողութիւն, ի՞նչի համար վատնել այդքան թանկագին վառօդ: Դիտէ՛ք, դուք աւելի մեծ քանակութեամբ վառօդ կրակեցիք՝ քան կրակեց մեր Շահը՝ Թուսի նշանաւոր պաշարումի ժամանակ՝ երբ, երբեք զնդակով ու մէկ թնդանօթով նա յաղթեց Իւզբէգ-ներին մի զօրախումբի, և դրանից յետոյ էլ միշտ իր ուժով ահ ու վախի մէջ պահեց նրանց ամբողջ թագաւորութիւնը: Բայց յանուն մարդարէի, ասացէ՛ք, քանի՞ թնդանօթ ունիք այս նաւում:

—Քառասուն և չորս, պատասխանեց մէհմանդարը:

—Իսկապէս քառասուն և չորս, հարցրեց նորին գերազանցութիւնը, թէ՞ յիշում էք այդ թիւը որպէս մի անորոշ թիւ՝ որ նշանակում է «չատ», ինչպէս մենք Պերսէպոլի մասին խօսելիս ասում ենք ջէհէլ մինար (քառասուն սիւն), կամ ջէհէլ թէն՝ (քառասուն մարմին) երբ խօսում ենք

այն շատ որբերի մասին, որոնք թաղուած են Շիրազի մօտ գտնուող հոյակապ դամբարանում:

— Ես իսկապէս քառասուն և չորս, պատասխանեց մէհմանդատը:

— Իսկապէս քառասուն և չորս հատ է, ասաց մէհմանդարը, դիմելով նաւապետին, որը կանգնած էր նրա մօտ: Բայց դա միայն մի չնչին բան է, աւելացրեց նա. մեր թագաւորը բազմաթիւ նաւեր ունի, որոնց մէջ սրանից երեք անգամ աւելի թնդանօթներ կան, և առ պակասը յիսուն նաւ էլ ունի, որոնց մէջ նոյնքան՝ այսինքն քառասուն և չորս հատ կան: Երբ որ դուք հաշուելու լինիք այն բոլոր թնդանօթները որ տարւում են ամեն տեղ՝ աշխարհիս մէկ ծայրից մինչև միւսը, դուք պիտի հարիւրներով չհամըք, այլ հազարներով:

— Ալլահ իլ Ալլահ, գոչեց դեսպանը իր մատները միկնոյն ժամանակ իր բերնի մէջ գետեղելով ու մտածելով: Յետոյ դառնալով դէպի ինձ և մեզանից մի քանիսին որոնք հաւաքուել էին նրա շուրջը՝ ասաց.

— Դուք տեսնում էք, որ ես ինչ առաջուց ձեզ ասացի՝ ճշմարիտ է: Ես ձեզ մի անգամ էլ սրանից առաջ ասել եմ, որ անգլիացիք իրանց թնդանօթները շինուած պատրաստուած՝ հանում են իրանց հանքերից, և տեսնում էք, անհ ձեզ ապացոյց: Եթէ Պարսկաստանի բոլոր դարբինները դարբերով նստեն ու առաւօտից մինչև գիշեր անդադար գործեն, դարձեալ չեն կարող այսքան թնդանօթ շինել:

— Բնի, բնի պատասխանեցինք մենք միաբերան:

— Մենք հաւատում ենք այդ ամենը, ասաց մէկը:

— Այս ֆրանկները դեւեր են, մարդիկ չեն, ասաց մի ուրիշը:

— Երբ մենք Պարսկաստան վերադառնանք՝ շատ զարմանալի բաներ կ'ուեննանք պատմելու, ասաց մի երրորդը:

Յետոյ յանկարծ, կարծես թէ կախարդական զօրութեամբ, մեր աչքի առաջ բացուեցին անագին առաքաստներ անպիսի տեղերից՝ ուր մենք սկզբում փայտերից ու պարաններից զատ՝ ուրիշ ոչինչ չէինք տեսել, և մինչև մի մոլլա կարողանար համբել իր թէսքին և հարիւր անգամ «Ալլահ ների ինձ» կրկնէր՝ մենք արդէն արագ շարժւում էինք ջրի վրայ: Կարծես թէ մի ընդհանուր շփոթ և իրարանցում տեղի ունեցաւ մեզ շրջապատող տների, նաւերի, ծառերի և լեռների մէջ, ու մենք յանձնուեցինք ալիքների ողորմութեանը:

— Մենք գնացինք ու կրկնակի գնացինք, ասաց դեսպանը. մենք այժմ Ալլահի ձեռքումն ենք:

—Ալլահը մեզ հետ լինի, հով Մոհամէդ, հով Ալլի, գոչեցի՝
ես:

—Ալլին մեզ բոլորիս անվտանգ յետ ուղարկի, հառաչեց
արարողապետը:

—Ամի՛...ն, ամի՛...ն, գոչեցին միւսները:

Գլ. Ժ.

Ն'արարողում է նաւի տախտակամածի վրայ տեսնուած այն բոլոր բա-
ները՝ որ պարսիկների աչքում նորութիւններ էին:—Նրանք հասկանում են
աստղաբաշխութեան եւ աստիղադիտութեան տարբերութիւնը:

Երբ նաւի տախտակամածի վրայ մեր առաջին հիացումն
սպառուեց, մենք վար իջանք մէկ սենեակի մէջ, որ զարդար-
ուած էր հայելիներով և կանոնաւորուած էր այնպիսի պիտոյք-
ներով, որոնք յարմար էին եւրոպացիների անձնական ու ցե-
ղական սովորութիւններին:

Այստեղ մեզ համար լուծուեց անկողնու խնդիրը, որ մին-
չև հիմա դեռ մեզ անհասկանալի էր եղել. որովհետեւ դա մի
տեսակ կախուած անկողին էր՝ որպիսին հայերը դործ են ա-
ծում Զուղայում, ուր դրա մէկ ծայրը կապուած է մի գերանից,
իսկ միւսն էլ մի մեխի գլխի օղակից որ անցկացրած է պատի
մէջ, և այդէս դա ճօճուած է:

Միւրդա Ֆիրուզը որոշեց քնել սրանցից մէկի մէջ: Ես իմ
ներքնակը փռեցի յատակի վրայ, նրա կից սենեակում, իսկ ծա-
ռաներն իրանց կարպետները փռեցին թնդանօթների արանք-
ներում և փայտէ մեխերից կախեցին իրանց հրացանները,
սրերն ու ատրճանակները՝ ինչպէս սովորաբար անում էին քա-
վանաարաններում ու փոստատներում:

Առաջին գիշերը մենք այնպէս անցկացրինք, որ նկարա-
զերել չէ կարելի: Ասել թէ մեր գլուխները պտոյտ էին դալիս,
մեր ստամոքսներն ու լեարդերն իրար էին խառնուում, մեր
լեարդերը ստիպուած էին կռուել մեր սրտի թեւերի հետ՝ այդ
քանը կըացատրի մեր թշուառութեան միայն կէսը:

Նաւի տատանումները, արտակարգ աղմուկները, հոտերի
նորութիւնը, տարօրինակ ձևով խօսելու ձայները որ դիպում
էին մեր ականջներին, մի խօսքով ամբողջ տեսարանի նո-
րութիւնը՝ շարունակ լարուած էր պահում մեր ուշադրութիւնը
և զանազան օրիգինալ մտածութիւնների պատճառ էր լի-
նում:

Մոհամէդը բէգը որ ամենեւին չէր մոռանում իր օրեկան հինգ անգամ աղօթելը—հրտեղ էլ որ լինէր—փոխէր իր կարպետը տախտակամածի վրայ և հէնց ուզում էր կատարել իր երկրպագութիւնը եօթն անգամների ¹⁾ վրայ, երբ նա սաստիկ ցնցուեց ու վայր ընկաւ քիթ վրայ:

Այս բանը մեծ քրքիջ պատճառեց Ֆրանկներին, որոնք կանգնած դիտում էին մի տեսարան՝ որ բոլորովին նոր էր իւրանց նաւի վրայ, և որը մեզ բոլորիս ախուր մտածութեան մէջ ձգեց ու մենք սկսեցինք ողբալ մեր գրութիւնը նրա հաժար՝ որ ընկել էինք անյայտի մարդկանց մէջ՝ որոնք ծաղրում էին մեր կրօնը և մեր Մարգարէին ու նրա հետևողներին խոզեր էին համարում:

Ինչ և է, «Ալլահ քէրիմ» և «Ալլահ աքբար» բառերի կրկնութիւնը մեզ յիշեցրեց թէ մենք ինչպիսի մարդկանց ձեռքումն էինք, ու մենք մտածեցինք որ, եթէ մեր բախտից ապականուէինք, յանցանքը միայն ճակատագրինն էր:

Մեր նաւ մտնելու հետեւալ առաւօտը զարթնելով՝ բոլորովին մի նոր տեսարան բացուեց մեր առջև—մի տեսարան՝ որ գոնէ մեզ համար բոլորովին նոր էր: Կեանքն ու աշխարհը կարծես թէ կտրուել, բաժանուել էին մեզանից, և մենք այժմ տեսնում էինք իրերի միայն դրսի կողմը: Ո՛ւր էր Սպահանը, ո՛ւր էր Բարձր Դէմովէնդը, ո՛ւր էին Սուլթանիէի դաշտավայրերը, ո՛ւր Մազանդարանի անտառները, Ո՛ւր էր Թէհրանը, ո՛ւր էր մեր Շահի փառքն ու շուքը, ո՛ւր էին նրա ոսկեգօծ պալատները, նրա երկաթազրան մարտիկները և նրա պայծառափայլ պալատականները:

Խուճխորի մայրաքաղաքը և մինչև անգամ նրա ամբողջ երկիրը անցել, հեռացել էին մեզանից, և մենք միայն մի բիծ էինք ովկիանոսում: Մեզ միայն ամպերն էին տեսնում, ու մենք անցնում, հեռանում էինք ցամաքների ստուերներից, որոնք նկարուած էին մեզանից շատ, շատ հեռու: Մենք գտնւում էինք անհաւատների ձեռքում, որոնք մեզ տանում էին՝ Ալլահը գիտէ թէ ո՛ւր: Այդ անհաւատների հետ մենք խօսակցել չէինք կարողանում. նրանք էլ չէին կարողանում մեզ ասել թէ ինչո՞ւ իրանք դէպի մէկ կողմն էին գնում, փոխանակ միւս կողմը գնալու, կամ թէ ինչո՞ւ իրանք ցանկանում էին մի ճանապարհ շինել ծովի միջով որտեղ ճանապարհ չկար, կամ թէ ինչո՞ւ, ինչ

¹⁾ Երկրպագութիւնը եօթն անգամների վրայ մի սովորական ձև է մահմեդականների մէջ. երկրպագելու ժամանակ՝ ձեռները, օտները, ծնկները և ճակատը պիտի միևնոյն բոլորէին դիպչեն գետին:

լաւ պատճառով՝ նաւը ուղղակի դէպի յառաջ էր գնում, քանի որ ոչինչ չկար որ արգելք դառնար նրա դէպի յետ գնալուն:

Մեզանից Քր մէկը գիտէր թէ Անգլիան հրտեղ է. ոչ մէկը:

Գուցէ հէնց այդքանը ինչ մենք տեսնում էինք ծովից ու երկնքից՝ անհաւատներ ի երկիրն էր, և գուցէ այդտեղ էր մեր վերջնական նպատակատեղին, որովհետև այդ բաները կարծես թէ նոյնքան դրանցը լինէին ինչքան էին ուրիշինը: Բայց այդպիսի երկիր թէ՛նչի պէտք էր որևէ մարդու համար, քանի որ դրա բոլոր բնակիչները փակուած պիտի մնային սնտուկներում, որոնց մէկի մէջ էինք գտնուում մենք. բացի դրանից՝ քանի որ այդ մարդիկը իրանց ցանկացած ժամանակ փախչում էին իրարից՝ ոչ մի կառավարութիւն չէր կարող իշխել նրանց վրայ և ոչ որ չէր կարող նրանց ենթարկել պատժի կամ տուգանքի:

Վերջապէս, մենք հրքան մեր մէջ աւելի էինք վիճաբանում մեր զրութեան մասին՝ այնքան աւելի էինք շփոթւում: Մէհմանդարի տուած բացատրութիւններն էլ չկարողացան պարզել մեզ համար այն՝ ինչոր մեզ համար դժուար էր հասկանալ, որովհետև նա մեզ հետ խօսեց այնպիսի բաների մասին, որ բոլորովին խորթ, տարօրինակ էին թւում մեզ, և մենք առ այժմ ստիպուեցինք մեր հետաքրքրութեան խաբխսել ձգել յուսոյ նաւահանգստի մէջ:

Քանի դեռ ցամաքին մօտ էինք, հասկանում էինք թէ նաւաստիներն ինչպէս էին կարող իրանց ճանապարհը գտնել. բայց երբ մի անգամ հեռացանք և ամեն բան անհետացաւ մեր աչքից, բացի ջրից ու երկնքից՝ մենք էլ չէինք կարողանում հասկանալ թէ նրանք ինչով էին առաջնորդւում, դեկավարւում:

Մենք, ինչ և է, սկսեցինք մի քիչ տեղեկութիւն ստանալ այդ մասին, որովհետև առաջին օրը երբ մենք հեռացանք ու ցամաքն այլևս չերևաց մեր աչքին, մենք տեսանք որ նաւը լըցուեց աստեղագէտներով: Կէսօրուան մօտ, նրանցից շատերը, որոնք մենք կարծել էինք թէ միայն ծոյլ երիտասարդներ էին, երևացին տախտակամածի վրայ, ամեն մէկի ձեռին մի-մի աստրոլաբ ¹⁾, և սկսեցին դիտել արեւը:

Մինչև անգամ տղերքն էլ ձեռք էին առնում իմաստութեան դործիքը, և նրանց՝ մեր հարցերին տուած պատասխան-

¹⁾ Astrolabe—աստղերի ու արեւի բարձրութիւնը չափող գործիք:
Մ. Թ.:

ներից երևում էր, որ նրանք կատարելապէս գտն էին որ նաւը ուղիղ ճանապարհովն էր գնում, և որ երկինքը հաշտ էր մեզ հետ:

Գիտութեան մէջ պակասաւոր չերևալու համար, Մոհամէդը բէգն էլ հանեց իր աստղաբանը, բայց չկարողացաւ անցնել գիտողութիւններն անել ինչոր նա սովորաբար անում էր Սպահանում Միրզա Քաղէմի մօտ սովորելիս, որովհետեւ նա նկատեց, որ իբր թէ մենք փոխել էինք մեր աստղերը և որ այստեղ իր տեսած աստղերը բոլորովին տարբեր էին նրանցից որ տեսնւում էին մեր երկրում:

Ինչ և է, Ֆրանկների ունեցած գիտութիւնը, ինչպէս նկատեցինք, մերից տարբեր էր, և նրանք աշխատեցին մեզ հասկացնել աստղաբանութեան և աստեղագիտութեան ¹⁾ տարբերութիւնը:

Թէպէտ անտաւրակոյս մենք մեր եզրակացութիւնները նոյն աղբիւրներից էինք հանում, սակայն մեր նպատակները նոյնը չէին, որովհետեւ դեսպանը վատառողջ զգալով և ցանկանալով դեղ ընդունել՝ մէհմանդարին ուղարկեց Ֆրանկ աստեղագետների մէկի մօտ հետաքրքրուելու թէ արդեօք երկնային մարմիւնները թոյլ կտան ինչ. բայց նրան այս պատասխանը տրուեց թէ՛ իրանց գիտութեան շնորհիւ, իրանք կարող էին միայն որոշել նաւի լայնութեան ու երկայնութեան աստիճանը, և որ տակաւին իրանք չէին սովորել վճռել թէ՛ հրը կը լինէր ամենայնաւոր ըստէն նորին գերազանցութեան «նեբրքսեր» առողջացնելու համար:

Այս պատասխանը, մի կերպ մեր աչքում բարձրացրեց, գերակայութիւն տուեց Մոհամէդը բէգին, որը, այս դէպքում, իր յատուկ ձևով շատ քաջաբար վճռեց թէ՛ արիւն առնելը և լուծողական դեղ ընդունելն առ այժմ կարող էր մեծ ապահովութեամբ կատարուել. բայց և այնպէս, մենք անչափ զարմանում էինք, երբ տեսնում էինք որ այստեղ աստեղագէտները մի խումբ անմօրուք տղաներ էին:

Այն՝ ինչոր մեր երկրում փորձառու մարդկանց պարապմունքն էր՝—մարդկանց՝ որոնք իրանց կեանքը անց էին կացրել աստղերին նայելով, և ուղիղ ժամեր նշանակելով մարդկային կեանքի ամեն մի գործի ու շարժումների համար՝ այստեղ միայն երեխաների գործն էր:

Ինչ հաւատացրին, որ այդ երեխաներից հրէէ մէկը, իր աստղաբանը ձեռքին՝ կարող էր ճշտութեամբ ասել թէ մենք

¹⁾ Astronomy & Astrology.

երկրի ինչ տեղումն էինք կանգնած, թէ մէկ մղոն մեզանից հե-
ռու ինչ տեղ էր, և իբրև ապացոյց, բաւական կը լինէր միայն
հակել և տեսնել թէ ինչ ժամանակ մենք կը տեսնէինք ցամա-
քը, որ սպասուում էր տեսնել այդ երեկոյ իսկ արևի մայր մըտ-
նելու ժամանակ:

Քանի որ աւելի քան մէկ շաբաթ էր ինչ մենք ծով էինք
մտել, մենք անձկութիւն ունէինք ստուգելու թէ արդեօք, բացի
Տաճկաստանից ու Պարսկաստանից՝ ուրիշ երկիրներ էլ գոյու-
թիւն ունէին թէ չէ. ուստի մենք էլ անգլիացի աստեղագէտ-
ների հետ միասին լաւ չոնցինք մեր աչքերը ցամաքը տեսնելու:

Ի վերջոյ, ճիշտ այն ժամանակ երբ արեգակն անդունդի
ամենահեռաւոր անկիւնի մէջ էր խորասուզուել՝ հորիզոնի վը-
րայ երևաց մի գիծ, որ ամեն մէկը պնդեց թէ ցամաքն էր, և
ես հրաւիրուեցի խոստովանելու աստեղագէտների ճշտութիւնը:

Մոհամէդ բէգը որ իրան այնքան մեծ անձնաւորու-
թիւն էր համարում, որպէս թէ Աբու Մազէրն ¹⁾ ինքը լի-
նէր՝ կասկածեց և հաւատացրեց նրանց՝ որոնք իրան ականջ
էին դնում, թէ իր գիտութիւնը աւելի նախադաս էր քան մեր
հաւաստիւններինը, այն պատճառով որ, ինքը կարող էր նախա-
պէս պաշտպանուել անտեսանելի բաների դէմ, այն ինչ անդ-
լիացիները միայն կարողանում էին գուշակել տեսանելի բա-
ների կերպարանքը:

Եւ այս պէպքում, ես լաւ յիշում եմ որ Մոհամէդ բէգը
մի յիշատակելի վիճաբանութիւն ունեցաւ մէհմանդարի հետ,
որը մինչ աշխատում էր մեզ հասկացնել ամեն օր միջօրէին
արուած դիտողութիւնների նպատակը, պնդում էր թէ այս եր-
կիրը որի վրայ մենք կանգնած ենք, պտոյտ է գալիս արեգա-
կի շուրջը, այն ինչ, յայտնի ճշմարտութիւն է, և Պարսկաս-
տանում էլ Ջէմշիդի օրից մինչև հիմա բոլոր ուսումնականները
ընդունել են, որ արեգակը բացի մեր երկրի շուրջը պտտելուց՝
ուրիշ ո՛չ մի գործ չէ կատարում:

Ես չեմ կարող լաւ արձանագրել այն ամենը որ խօսուեց
երկու կողմից ևս, բայց այսքանը յիշում եմ, որ Մոհամէդ
բէգը՝ վրդովուելով մէհմանդարի դիտողութիւնների նորութիւ-
նից՝ վերջացրեց վիճաբանութիւնը ասելով թէ՝ եթէ ինքը
Պարսկաստանում կը լինէր—սեփական սահմանում՝ շուտով

¹⁾ Աբու Մազէր, որ արաբերէն նշանակում է «խօսակցութեան կամ
զրոյցատուութեան հայր», մի նշանաւոր աստղաբաշխ և աստղագէտ էր, և
յայտնի էր Նւրոպայում Ալբուսազէր անունով:

անհերքելի փաստերով կը հաստատէր իր ասածների ճշմարտութիւնը:

Դլ. ժա.

Նրանք համոռւմ են Մալտա:—Նրանք զայրանում են քառանքինի իստուծունների վրայ եւ հաղորդակցութիւն են պահում անգլիացի կառավարչի հետ:

Հետեւեալ առաւօտը մենք մեզ գտանք Մալտա կոչուած մի կղզու մօտ, որի ժամին մէհմանդարն ասաց որ առաջները պատկանելիս էր եղել մի խումբ կռուող դէրվիշներին, որոնց միակ գործն էր անրնական երդումներ անել և կռուել ճշմարիտ հաւատի զաւակների դէմ: Սակայն, ինչպէս երևում էր նրանց ճակատագրները ոչինչ էին օրհնեալ Մարգարէի ճակատագրի դիմաց, որովհետեւ Իսլամը այսօր բարգաւաճում է, այն ինչ նրանք այլ ևս գոյութիւն չունին:

Նրանց գլխաւոր օրէնքների մէկի համաձայն՝ նրանք չէին կարող ամուսնանալ: Ապա նրանք ինչպէս էին կարող շարունակել գոյութիւնը: Քաջայայտ է, նրանց օրէնսդիրը աւելի թանձրամիտ ապուշ էր եղել քան «տիմարութեան հայրը»¹⁾:

Եթէ նրանց իրաւունք տրուած լինէր պահելու կէսը, կանանց այն թուի, որ Մարգարէն թոյլատրել է իր հետեւողներին պահել՝ թերեւ նրանք կը բարգաւաճէին:

Այն անյագութիւնը որով մենք նայում էինք ծովափին դէպի նաւահանպիստը նաւարկելիս՝ կարող է աւելի լաւ երեւակայուել քան նկարագրուել: Մենք տեսանք նոր մարդիկ, նոր կանայք, նոր շինութիւններ, և լսեցինք նոր լեզու, նոր ձայներ: Եթէ Պարսկաստանի և Արաբիայի միջով անցնող բոլոր կարաւանները հաւաքուէին, նրանց զանգակների միացած ձայները չէին կարող աւելի մեծ լինել քան այն յաւիտենական զննչընդոյնները որ լսում էին բազմաթիւ մինարէթներէից, որոնք զանազան տարօրինակ և ֆանտաստիկ ձևերով բարձրացած էին երևում ամբողջ քաղաքում:

Իսմայիլ բէգը, լաւ նկատեց որ մինակ այս հանգամանքից յայտնի էր որ մենք հասել էինք քրիստոնեաների երկիրը, որովհետեւ այստեղ նրանք կարող էին հնչեցնել իրանց զանգե-

¹⁾ Աբու ջահըլ՝ «տիմարութեան հայրը»—այդպէս են կոչում էջին արաբները:

ըր, այն ինչ նրանցից ոչ մի շուն չէր համարձակուիլ նոյն բանն անել մեր քաղաքներում, առանց թանգ գնով արտօնութիւն գնելու։ Եւ նա աւելացրեց որ այդքան բազմաթիւ զանգեքը որոնց ձայները մենք լսում էինք՝ կարող էին եկամուտի լաւ աղբիւր դառնալ Շահի որդիներից մէկն ու մէկի համար։

Հէնց որ նաւը խարխիւ ձգեց, մեր առաջին ձգտումն այն եղաւ, որ աշխատեցանք իսկոյն ցամաք վազել։ սակայն ճրջափ մեծ եղաւ մեր զարմանք ու զայրոյթը երբ մեզ յայտնեցին թէ անմիջապէս քաղաք մտնելու թոյլ տրուութիւն չկար մեզ համար, և թէ առնուազը քառասուն օր պէտք էր անցնէր մինչև որ մենք մաքուր մարդիկ յայտարարուէինք։

Երբ մենք լսեցինք այս, մեր կատաղութիւնը սահմանից անցաւ և մենք իսկոյն գնացինք դեսպանի մօտ մեր սրտները դատարկելու։

— Յանուն Ալլահի, ասացի ես, խօսելով միւսներին կողմից էլ, միթէ մենք այսքան հեռու ճանապարհ ենք եկել որ անմաքուր համարուենք։ Մենք մուսուլման ենք, և մինչև այսօր մենք դեռ չենք լսած թէ այս շուն քրիստոնեաներից զատ՝ ուրիշ անմաքուր բան էլ կայ։ Մենք կարող ենք կեղտոտուել միայն այն պղծութիւնից, որ կաշոււմ է մեզ նրանց մէջ ապրելով։ Յանուն Մարգարէի, մենք ցանկանում ենք Պարսկաստան վերադառնալ։ Եթէ ձեզ թոյլ չէ տրոււմ ցամաք իջնել այստեղ՝ Անգլիայում հօ երբեք թոյլ չեն տալ, որ իրանց երկիրն է, և ուր դրուած է նրանց գահը։

— Դու անտեղի չես խօսում, Հաջի Բաբա, ասաց դեսպանը այնպէս անվրդով կերպով որ անսովոր էր նրան։ Ես էլ ապշած եմ մնացել, բայց Շահի գործը պիտի կատարուի։ Նրա ծառայութեան մէջ աղտեղութիւն ուտելն այժմ մեր օրեկան գործը պիտի լինի, և մենք պէտք է ուտենք ու փառք տանք Ալլահին։ Մէհմանդարն աշխատել է ինձ հասկացնել այս կանոնի պատճառը. նա ասում է թէ այդ մի նախազգուշութիւն է համաճարակի դէմ, և այդ կանոնն ամբողջ Ֆրանկստանի թագաւորութեան մէջ՝ ոչ ոքի համար, մինչև անգամ թագաւորի համար էլ չի բեկանուել, և որ, ով որ այդ կանոնից փախչելու լինի՝ նրան իսկոյն կը գնդակահարեն որպէս մի վայրենի գազանի, և թէ մեզանից մէկը դիմադրութիւն անի՝ նոյն պատուին կարժանանայ։ Հաջի Բաբա, քանի որ այս է հանգամանքը, մենք ի՞նչ կարող ենք անել. ոչինչ, միայն թէ պիտի նըստենք ու համբերենք։ Այս մարդիկը չեն հաւատում թաղովի-

ըին¹⁾ նրանք չեն սիրում մեռնիլ, եթէ հնարաւորութիւն ունենան խուսափելու մահից, և ճիշտն ասած, ես կարծում եմ նրանք իրաւունք ունին:

— Բայց մենք հօ, հիւանդութիւն չունինք, բացազանչեց թաղին: Մենք իրանցի ենք, մեր երկիրն իրանն է, ուր երբեք խօլերա չկայ, չէ գալիս: Թող նրանք տաճիկներին նային և նրանց ողջունեն որպէս անմաքուրների: Բայց մենք հօ պարսիկ ենք:

Մոհամէդ բէգը մի քանի խելօք դիտողութիւններ արեց ճակատադրի անսխալ վճիռների վրայ և ղորանից էլ մի քանի խօսքեր կրկնեց, որ մեծ ազդեցութիւն ունեցան մեր վրայ: Նա միևնոյն ժամանակ աւելացրեց որ, եթէ մեզ վիճակուած չէր մեր ոտները Մալտայի ափի վրայ դնել, ուրիշ հչիւնչ խօսք չպիտի ասէինք, այլ պիտի առանց դժգոհութեան սաղուէինք հանգամանքների հետ:

Մոհամէդ բէգի խօսքերը մեղմացրեց մեր անհամբերութիւնը, որ աւելի ևս խաղաղեց, երբ տեսանք որ հետևեալ օրը մենք շարունակելու էինք մեր նաւորդութիւնը մի շատ աւելի մեծ նաւով, որը մեզ ցոյց տրուեց և որը, իսկապէս նմանւում էր ջրի երեսին տատանուող մի ամբողջի:

Մեր տեսած բոլոր բաները մեզ ուղղակի ապշեցին, և այն նաւի ոյժը որի մէջ մենք այժմ էինք՝ ընկաւ մեր աչքում, երբ ամեն մի ըռնջ ու պուշախում մենք գտանք այնքան բազմաթիւ թնդանօթներ մէկը միւսի կողքին, որ եթէ Պարսկաստանում մենք նրանց մասին ճիշտը պատմելու լինէինք՝ հչ ոք չէր հաստայ մեզ:

Մենք այժմ, առաջին անգամ, սկսեցինք հասկանալ թէ անդլիացիք թ'նչպէս, թ'նչ ուժով կարողացել էին տիրել Հնդկաստանը, և մտածեցինք որ մեր լսած բոլոր բաները որ ասում էին թէ պառաւ կանայքն են կառավարում նրանց՝ անհեթեթ խօսքեր էին, որովհետև այսպիսի թնդանօթներով և այսպիսի նաւերով որ ոյժ ունին այդպիսի թնդանօթներ տանել՝ էլ ռձ չէր կարող աշխարհը տիրել:

Շուտով մեր նաւը շատ հաղորդակցութիւն ունեցաւ ափի հետ, և մեզ յայտնուեց որ դեսպանի հասնիլը տարօրինակ աղմուկ էր հանել, որը շուտով ապացուցուեց նրանով որ բազմաթիւ նաւակներ շրջապատեցին մեզ:

Լուր էր տարածուել, ի միջի այլոց, թէ այն նաւը որ

¹⁾ Նախասահմանութեանը:

տանում էր մեր ձիերին՝ բեռնաւորուած էր նաև դեսպանի կինե-
րով, և հետևաբար այդ նաւն էլ նոյնքան գրաւեց հասարակու-
թեան ուշադրութիւնը որքան մերը: Այն օրից ինչ մենք
նաւ էինք մտել՝ չէրքէզուհին ամենեկին չէր շարժուել այն ան-
կիւնից որտեղ առաջին օրը տեղաւորուել էր: Նա այնքան
քիչ բան էր իմացել թէ ինչ էր անցել և ինչ էր անցնում,
որ մեր Մալտա հասնելուց շատ յետոյ, նա նո՛ր հետաքրքրուեց
մեզանից թէ ինչ խաբար կար:

Նախ քան մեր՝ փոքր նաւից մեծ նաւը փոխադրուելը,
Միրզա Ֆիրուզին այցելեց քաղաքագլուխը, որը մեզ մօտենա-
լիս՝ մատնանիշ արեց մեր նաւի կայմի ծայրից ծածանուող
դեղին դրօշակը, որպէս արդարացուցիչ պատճառ տախտակա-
մածի վրայ չբարձրանալու համար: Այդ դեղին դրօշակը, ան-
մաքրութեան նշան էր համարուում: Մէհմանդարի թարգմա-
նութեամբ, նա արդարացրեց իրան որ չէր կարողացել դեսպանին
ընդունելութիւն տալ ծովափում. բայց կրկին հաւաստիացրեց
որ քարանթինի կանոններն այնքան խիստ էին՝ որ մինչև ան-
գամ հրեշտակն էլ չէր կարող ընդունուել որպէս մաքուր՝ եթէ
նա Տաճկաստանից եկած լինէր:

Նա յետոյ ասաց որ իր կառավարութիւնը իրան յայտնել
էր թէ դեսպանը հաւանականաբար պիտի դիպչէր Մալտային,
և իրան պատուիրուած էր ամեն ջանք գործ դնել փութացնելու
նրա նաւորդութիւնը, որովհետև ամբողջ Անգլիայի ժողովուրդը
սկսած թագաւորից մինչև գիւղացին՝ անձկանօք սպասում էին
տեսնելու և պատուելու նրան:

Ապա նա վերջացրեց իր խօսքը մասնաւորապէս հետա-
քրքրուելով Շահի առողջութեան և Պարսկաստանի քաղաքական
դրութեան մասին:

Միրզա Ֆիրուզը հարկ համարելով մի լաւ պատասխան
տալ այդպիսի փաղաքշական խօսքերին, նաև, ըստ կարելոյն
ցոյց տալ որ իր երկիրը ամենամեծ աջողութեան վայելման
մէջ էր՝ հաւաստիացրեց քաղաքապետին թէ՛ վերջին անգամ
որ ինքը լուր էր ստացել Շահից, նա վայելելիս էր եղել ամե-
նակատարեալ ուղեղի առողջութիւն, որ նա մեծ ուրախութեան
մէջ էր եղել, որովհետև նրա մօտ նոր հասած էին եղել քսան
շորաբեռ ապստամբների գլուխներ որ ուղարկուել էին խորա-
սան և Մազանդարան խեթացած, դժգոհ նահանգներից, և որ
նորին մեծութեան քսանհինգերորդ որդու ջանքով՝ նրա յաղ-
թական զօրքերը բոլորովին աւերել էին այդ նահանգները:

Դեսպանը յոյս ունէր որ այս լուրը կ'ուրախացնէր քա-
ղաքապետին, և ընդհանուր բաւականութիւն կը պատճառէր

ամբողջ Անգլիայում՝ երբ այնտեղ էլ տարածուէր այդ Քաղաքապետը նկատեց որ դա մի չլսուած աշոգութիւն էր, և որքան մենք կարողանում էինք հասկանալ մեր թարգմանչից՝ նա պատշաճ կերպով շնորհաւորեց այդ յաղթութիւնը:

Նա յետոյ հարկանոր համարեց մի լուր էլ իր կողմից հաղորդել, և նա տուեց մի լուր՝ որ մեր ականջին ամենեին լաւ չհնչեց: Ինչքան որ մենք կարողացանք հասկանալ՝ Անգլիայում մի թունդ քաղաքական պատերազմ կար, որովհետեւ նա մեծ հրճուանքով մեզ հաւատացրեց թէ Անգլիայի Շահի վեզիրները, որոնք, ինչպէս Տաճկաստանում՝ նրա զօրքերի հրամանատարներն են՝ մի նշանաւոր յաղթութիւն էին տարել մի ապստամբ ժողովուրդի վրայ որ կոչւում էր «Դիմադրութիւն»:

Այս նիւթի վրայ՝ մէհմանդարն երկար բացատրութիւններ չէր մտաւ—բացատրութիւններ՝ որ մենք ոչ մի կերպով չէինք կարողանում ըմբռնել և որքան որ նա և քաղաքապետը միասին կարծում էին թէ այդ դէպքի շնորհիւ իրանց կառավարութիւնը աւելի ուժեղացած, ամրապնդուած էր՝ այնուամենայնիւ մենք դեռ կասկածում էինք թէ արդեօք անխոհմտութիւն չէր մեր դեսպանի և մեզ համար գնալ մի երկիր, որ լի էր յաւիտենական աղմկով ու շփոթով, և որը ինչպէս փորձը մեզ Պարսկաստանում ցոյց էր տուել, չէր կարող կատարելապէս կարգի ընկնել մինչև որ միայն մէկ Շահ մնար, որպէս անվիճելի տէր և իշխան դրա վրայ:

Քաջայայտ էր որ ապստամբները զօրեղ էին եղել, որովհետեւ ինչպէս քաղաքապետի պատմութիւնից երևաց՝ նրանք թէև ամեն օր յաղթուելիս են եղել, այնուամենայնիւ չէին ցրուել:

—Ա՛, ասաց Մոհամէդ բէգը, Ֆրանկները կարող են խօսել թէ իրանք ինչպէս են վարում կառավարական գործերը, բայց խօսք չկայ որ նրանք արեւելեան իմաստութեան մեծ պակասութիւն ունին: Մի քիչ թուծիէ դովլէթ¹⁾ (պետական շուփայ) է հարկաւոր նրանց համար, և Ալլահի օրհնութեամբ, դ՛ուք էք այն մարդը որ կարող էք նրանց սովորեցնել թէ ինչպէս պիտի գործածել դրան:

Այս խօսքի վրայ, դեսպանը, ըստ երևոյթին, շատ հաճոյացաւ և լսելով մեզ «բարեբալլան» գոչելիս՝ ոլորեց իր բեխե-

1) Շուփան (աչքի դեղ), ծարրաքարի փոշին է, որ արեւելեան ժողովուրդը միշտ գործ է ածում աչքի լոյսը զօրեղացնելու համար, և դա, որպէս դեղ ազդային գործերի համար յաճախ հեզնաբար յանձնարարում է նրանց՝ որոնց վարքը նշաւակելի է:

ըրև և ասաց, որ թէև մեր ծովային ճանապարհորդութեան ըսկիզբը աղետալի էր եղել (աղետալի պիտի համարենք, քանի որ մի անհաւատ՝ անմաքուր է համարում մի ճշմարիտ հաւատացեալի) բայց մենք արդէն այնքան հեռացել էինք՝ որ այլևս չէր կարելի վերադառնալ, և որ, թէպէտ իրերը շատ վատ էին երևացել, այնուամենայնիւ ինքն յոյս ունէր որ ի վերջոյ ամեն բան աջող կը գնար:

Ուստի հէնց որ քաղաքապետը հեռացաւ, մենք իսկոյն թոյլ տուինք որ մեզ առաջնորդէն դէպի մեր նոր նաւը: Մենք տխրութեամբ բաժանուեցինք մեր բարեկամներից որոնք մնացին փոքր նաւումը, և որոնք, ինչպէս երևում էր, շատ անձկութիւն ունէին մեզ հետ Անգլիա դնալու. բայց երբ մենք ապահովուեցինք մեծ նաւում, այլևս բերկրութիւնից ու հիացումից զատ ուրիշ հիշելի չգտացինք:

Գլ. Ժբ.

Հացի Բաբան նկարագրում է մի անդլիական նաւ—Այն անհատների մասին՝ որոնց նա հանդիպում է նաւում:—Նրա դժուարութիւնները եւրոպական քաղաքավարական ձեւեր բանեցնելու մէջ:

Դեսպանին մեծ հանդիսաւորութեամբ նաւի վրայ՝ ընդունեց նաւապետը—մի ծերունի՝ որը, ինչպէս մենք կ'արծեցինք, մեզ յարգելու համար՝ իր մազերն այնպէս լաւ կերպով ճերմակացրել էր սպիտակ փոշով որ երբէք չէր թափւում ¹⁾:

Նա ուրիշ ի՞նչ շարժառիթ պիտի ունենար իր մազերն սպիտակացնելու, բացի այն՝ որ խոնարհութիւն ցոյց տար: Նա կանգնած էր գլխարկը վեր առած՝ անշուշտ ցոյց տալու իր մազերի փոշին: Միևնոյն ժամանակ մի շատ հաճոյական ճառ խօսեց և, յետոյ, որպէս զի ցոյց տար թէ ինքը լոկ բառերով չէր սահմանափակւում՝ պատուիրեց մի ահագին թնդանոթաձգութիւն:

Նա յետոյ մեզ ման ածեց ամբողջ նաւում և ցոյց տուեց բոլոր տեղերը, ուր մենք գտանք ամեն բան որ մարդուս սիրտը կարող էր ըղձալ՝ բացի ձիերից և մի կանաչ դաշտից ձի քշելու համար: Այստեղ, այս նաւում մենք տեսանք մօտաւորապէս աւելի շատ թնդանոթներ քան վերջին նաւում, և բաւա-

¹⁾ Մազերը սպիտակ փոշով ճերմակացնելու սովորութիւնը դեռ դատու սկզբումը գործադրում էին մի քանի անձինք:

